# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՀՀՎԱ-ՄԱԾՁԲ-25/56

ք. Երևան «____» _____ 2025թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Գարիկ Բոշյանի, որը գործում է վարչապետի աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ն, ի դեմս տնօրեն ռեկտոր Խաչատուր Ղազեյանի, որը գործում է Ակադեմիայի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է աշխատակիցների վերապատրաստման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասը աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

**4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 182 400 (մեկ հարյուր ութսուներկու հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

**5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

**6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկիառկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկըներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| **Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ** | **Կ Ա Տ Ա Ր Ո Ղ** |
|---|---|
| Վարչապետի աշխատակազմ | «ՀՀ պետական կառավարման |
| ք.Երևան, Հանրապետության հրապարակ, | ակադեմիա» ՊՈԱԿ |
| Կառավարական տուն 1 | ք.Երևան, Կիևյան-8 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | ՀՀ ՖՆ գործառնական վարչություն |
| Հ/Հ 900011022085 | Հ/Հ 900018005646 |
| ՀՎՀՀ 02505554 | ՀՎՀՀ 00035088 |
| --- | --- |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Digitally signed by BOSHYAN GARIK 1404880475
Date: 2025.03.19 11:33:39 AMT

Digitally signed by GHAZEYAN KHACHATUR 2408850088
Date: 2025.03.18 15:43:40 AMT

*Հավելված N 1*
*«  »  2025թ. կնքված*
*ՀՀՎԱ-ՄԱԾՁԲ-25/56 ծածկագրով պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | Չափման միավորը | Ընդհանուր գինը/ՀՀ դրամ | Ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | Ժամկետը** |
| 1 | 79631200/3 | Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ-1<br>Աշխատանքային օրենսդրություն<br>• Աշխատանքային օրենսդրությունը և դրանով կարգավորվող հարաբերությունները:<br>• Աշխատանքային հարաբերություններ, աշխատանքային հարաբերությունների ծագման հիմքերը, աշխատանքային հարաբերությունների կողմերը:<br>• Աշխատանքային իրավունքների իրականացումը և պաշտպանությունը:<br>• Անհատական աշխատանքային հարաբերություններ:<br>• Աշխատանքային պայմանագրի տեսակները:<br>• Աշխատանքային պայմանագրի կատարումը:<br>• Աշխատանքային պայմանագրի լուծումը:<br>• Աշխատողների անձնական տվյալների պաշտպանությունը:<br>• Աշխատաժամանակ և հանգստի ժամանակ:<br>• Աշխատանքային կարգապահությունը:<br>Վերապատրաստման ենթակա քաղաքացիական ծառայողների թիվը՝ 3:<br>Ծրագրի տևողությունը՝ 24 ժամ: | դրամ | 28800 | 1 | ՀՀ, Երևան քաղաքում, մատակարարի նշած հասցեում | 2025 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ |
| 2 | 79631200/4 | Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ-2<br>Քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենսդրություն<br>• Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելը:<br>• Քաղաքացիական ծառայողների վերապատրաստումը:<br>• Քաղաքացիական ծառայողների իրավական վիճակի առանձնահատկությունները:<br>• Քաղաքացիական ծառայողների աշխատանքային հարաբերությունների առանձնահատկությունները:<br>• Ծառայության դադարումը, քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատելը, լիազորությունները դադարեցնելը:<br><br>Վերապատրաստման քաղաքացիական ծառայողների թիվը՝ 3:<br>Ծրագրի տևողությունը՝ 24 ժամ: | դրամ | 28800 | 1 | ՀՀ, Երևան քաղաքում, մատակարարի նշած հասցեում | 2025 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ |
| 3 | 79631200/5 | Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ-3<br>Հանրային ծառայության մասին ՀՀ օրենսդրություն<br>• Օրենքի կառավարման առարկան և գործողության ոլորտը:<br>• Հանրային պաշտոնների դասակարգումը:<br>• Հանրային ծառայության կազմակերպման առանձնահատկությունները:<br>• Հանրային ծառայողների հիմնական իրավունքները և պարտականությունները, | դրամ | 9600 | 1 | ՀՀ, Երևան քաղաքում, մատակարարի նշած հասցեում | 2025 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | հանձնարարական տալու սահմանափակումները:<br>• Բարեվարքության համակարգը:<br>• Գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման պարտականությունը:<br>• Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների սոցիալական պաշտպանվածությունը:<br>Վերապատրաստման քաղաքացիական ծառայողների թիվը՝ 1:<br>Ծրագրի տևողությունը՝ 24 ժամ: | | | | | |
| 4 | 79631200/6 | Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ-4<br>Փաստաթղթաշրջանառություն (գործավարություն, արխիվայի գործ):<br>• Փաստաթղթերի նշանակությունը կառավարման համակարգում: Փաստաթղթերի դասակարգումը: Պաշտոնական նամակագրություն:<br>• Գործավարության կազմակերպումը պետական կառավարման համակարգի մարմիններում: Փաստաթղթերի նախապատրաստում: Փաստաթղթերի ստեղծման համար անհրաժեշտ փուլերը:<br>• Փաստաթղթաշրջանառության կազմակերպումն ու իրականացումը:<br>• Հանձնարարականների կատարման ապահովումը:<br>• Օրենսդրական տեխնիկայի կանոնները:<br>• Արխիվի ստեղծումը և համալրումը: ՀՀ արխիվային հավաքածուի կազմը: Արխիվային գործի կազմակերպումը:<br>• Արխիվային փաստաթղթերի պահպանումը և հաշվառումը: Արխիվային փաստաթղթերի մշտական և ժամանակավոր պահպանություն:<br>Վերապատրաստման ենթակա քաղաքացիական ծառայողների թիվը՝ 1:<br>Ծրագրի տևողությունը՝ 24 ժամ: | դրամ | 9600 | 1 | ՀՀ, Երևան քաղաքում, մատակա-րարի նշած հասցեում | 2025 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ |
| 5 | 79631200/7 | Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ-5<br>Իրավական ակտերի մշակման առանձնահատկու-թյուններ<br>«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք և օրենքից բխող ենթաօրենս-դրական ակտեր, այդ թվում՝<br>• իրավաստեղծ գործընթացի ընդհանուր նկարագիրը.<br>• օրինաստեղծ գործընթաց.<br>• իրավական ակտերի մշակման տեխնիկա.<br>• հղումների կիրարկումն իրավական ակտում.<br>• իրավական ակտերի փորձաքննությունը և ժամկետները.<br>• իրավական ակտերի մեկնաբանումը և պարզաբանումը.<br>• հանրային քննարկումներ:<br>Վերապատրաստման ենթակա քաղաքացիական ծառայողների թիվը՝ 6:<br>Ծրագրի տևողությունը՝ 24 ժամ: | դրամ | 57600 | 1 | ՀՀ, Երևան քաղաքում, մատակա-րարի նշած հասցեում | 2025 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ |
| 6 | 79631200/8 | Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ-6<br>Վիճակագրական տվյալների մշակում և վարում մայքրոսոֆթ էքսել ծրագրով<br>• էլեկտրոնային աղյուսակի միջավայրը:<br>• Աշխատանքային թերթի պարամետրերի սահմանումը, փաստաթղթի տպագրումը, կրկնվող տողեր կամ սյուներ (COMMANDS-Page Setup): Սորտավորում և ֆիլտրացիա: Մեկնաբանությունների կառավարում: Պատրաստի ֆայլի դիտման տեսակները:<br>• Ֆայլի մեջ նկարների, տարատեսակ պատկերների ներմուծում: Գծապատկերների կառուցում: Սիմվոլների ներմուծում: | դրամ | 48000 | 1 | ՀՀ, Երևան քաղաքում, մատակա-րարի նշած հասցեում | 2025 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | • Տվյալների տեղափոխում, պատճենահանում, աղյուսակային տվյալների ֆորմատավորում, տեղեկատվության հավասարեցում, տեղեկատվության տիպի որոշում: Բանաձևերի գրառում (COMMANDS-Pivot Table, Pictures, Shapes, Charts, Text, Symbol, Equation): Բանաձևերի կազմում:<br>• Ֆունկցիաների ներմուծում՝ Վիճակագրական, տրամաբանական,տեքստային (COMMANDS-Insert Function, Name Manager, Formula Auditing, Calculation): Մի քանի պատուհանների դասավորումը էկրանի վրա: Տողի կամ սյան սառեցումը:<br>• Աշխատանք աղյուսակի բջիջների հետ, բջիջների ավելացում, ջնջում, հասցեավորում: (COMMANDS-Clipboard, Font, Alignment, Number, Conditional Formating, Cels, Editing): Ամփոփ աղյուսակի ստեղծում: Տարբեր աղյուսակների համախմբում:<br>• Աղյուսակների տվյալների համախմբում, միջանկյալ տվյալների ստացում (COMMANDS-Sort Filter, Text to Columns, Remove Dublicates, Consolidate, Group, Ungroup, Subtotal):<br>• Ֆայլի կամ էջի պաշտպանություն ծածկագրերի օգնությամբ (COMMANDS-Workbook Statistics, Comments, Protect Sheet, Protect Workbook): Աշխատանքային միջավայրի բաժանումը: (COMMANDS-Workbook Views, Zoom, Window):<br>Վերապատրաստման ենթակա քաղաքացիական ծառայողների թիվը՝ 5:<br>Ծրագրի տևողությունը՝ 24 ժամ: | | | | | |

** ՀՀ պետական բյուջեի միջոցներով քաղաքացիական ծառայողների վերապատրաստում իրականացնող կազմակերպությունը պետք է համապատասխանի ՀՀ առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 9-ի «Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կարգը, վերապատրաստում իրականացնող կազմակերպություններին ներկայացվող հիմնական չափանիշները, կրեդիտների սահմանման հիմնական սկզբունքները, կարիքները գնահատելու և անհատական ծրագիր կազմելու, ինչպես նաև համապատասխան մարմնի վերապատրաստման ծրագիրը կազմելու, միջազգային հավաստագրերի ճանաչելիության սկզբունքները, տեսակները սահմանելու մասին» N 2-Ն որոշմամբ սահմանված կարգի 3-րդ մասի չափանիշներին:*

*Վերապատրաստումներն անհրաժեշտ է իրականացնել նշված որոշմամբ սահմանված կարգի ընթացակարգերին համապատասխան: Դասընթացները պետք է պարունակեն ուսումնական նյութի յուրացումը ստուգող 20-40 թեստային առաջադրանքից կազմված թեստ:*

*** Ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

****Վճարումը կիրականացվի փաստացի մատուցված ծառայությունների դիմաց՝ վերապատրաստմանը մասնակցած քաղաքացիական ծառայողների թվին համապատասխան:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554

---
(ստորագրություն)

Կ.Տ.

Digitally signed by BOSHYAN GARIK
1404880475
Date: 2025.03.19 11:33:58 AMT

**ԿԱՏԱՐՈՂ**

«ՀՀ պետական կառավարման
ակադեմիա» ՊՈԱԿ
ք.Երևան, Կիևյան-8
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018005646
ՀՎՀՀ 00035088

---
(ստորագրություն)

Կ.Տ.

Digitally signed by GHAZEYAN KHACHATUR
2408850088
Date: 2025.03.18 15:44:13 AMT

*Հավելված N 2*
*«  »  2025թ. կնքված*
*ՀՀՎԱ-ՄԱԾՁԲ-25/56 ծածկագրով պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդա-մենը |
| 1 | 79631200/3 | Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ | - | - | - | 28800 | 28800 | 28800 | 28800 | 28800 | 28800 | 28800 | 28800 | 28800 | 28800 |
| 2 | 79631200/4 | Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ | - | - | - | 28800 | 28800 | 28800 | 28800 | 28800 | 28800 | 28800 | 28800 | 28800 | 28800 |
| 3 | 79631200/5 | Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ | - | - | - | 9600 | 9600 | 9600 | 9600 | 9600 | 9600 | 9600 | 9600 | 9600 | 9600 |
| 4 | 79631200/6 | Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ | - | - | - | 9600 | 9600 | 9600 | 9600 | 9600 | 9600 | 9600 | 9600 | 9600 | 9600 |
| 5 | 79631200/7 | Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ | - | - | - | 57600 | 57600 | 57600 | 57600 | 57600 | 57600 | 57600 | 57600 | 57600 | 57600 |
| 6 | 79631200/8 | Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ | - | - | - | 48000 | 48000 | 48000 | 48000 | 48000 | 48000 | 48000 | 48000 | 48000 | 48000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554

Digitally signed by BOSHYAN GARIK 1404880475
Date: 2025.03.19 11:34:17 AMT
---
(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«ՀՀ պետական կառավարման
ակադեմիա» ՊՈԱԿ
ք.Երևան, Կիևյան-8
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018005646
ՀՎՀՀ 00035088

---
(ստորագրություն)

Կ.Տ.

Digitally signed by GHAZEYAN KHACHATUR 2408850088
Date: 2025.03.18 15:44:37 AMT

*Հավելված 3*
*«  »  2025թ. կնքված*
*ՀՀՎԱ-ՄԱԾՁԲ-25/56 ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*«  » «  » 20  թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«  »  2025թ. կնքված*
*ՀՀՎԱ-ՄԱԾՁԲ-25/56 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը  Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20  թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը  պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

*Հավելված N 4*
*«  »  2025թ. կնքված*
*ՀՀՎԱ-ՄԱԾՁԲ-25/56 ծածկագրով պայմանագրի*

# ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--»  20  թ. կնքված
պատվիրատուի անվանումը  կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____-ի  միջև  «--»  20  թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

_____  _____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)  ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--»  20  թ.